Նոր Համարներ Ընտանեկան Բռնության Զոհերի Համար

Որեւէ մի անձ կարող է զոհ դառնալ ընտանեկան բռնության, հարձակումի, կամ կյանքի վտանգաւոր կացութիւնների: Եթե դուք ընտանեկան բռնության զոհ եք, Սոցիալական Ապահովությունը կարող է ձեզ օգնել:

Հանրային զարգացման սպայքար ներկայացնող անձիք շեշտում են զոհերի ապահով ծրագիրների մշակումը, որն իր մէջ ընդգրկում է անձնական փաստաթղթերի հավաքումը եւ ապահով ապրելու տեղ գտնելը: Երբեմն զեղծանողից խուսափելու եւ հետագա բռնությունների հաւանականութիւնը կրճատելու լաւագոյն ճանապարհը կարող է լինի վերաբնակեցումը եւ ինքնության փոփոխումը: Կապված այդ փոփոխությունների հետ Սոցիալական Ապահովության նոր համար ունենալը կարող է օգտակար լինի:

Թէեւ Սոցիալական Ապահովության Վարչությունը սովորաբար նոր համարներ չի տրամադրում, այս դէպքում դա անում ենք, եթէ ապացույցները ցույց են տալիս թէ դուք հարձակումների կամ բռնության զոհ եք եղել կամ էլ ձեր կյանքը վտանգի մէջ է:

Նոր համար ստանալու որոշումը լուրջ հարց է: Այն կարող է ազդել ձեր հարաբերությունը պետական եւ նահանգային գործակալությունների, գործատերերի եւ ուրիշների հետ, որովհետեւ ձեր դրամական, բժշկական, աշխատանքային եւ այլ կարգի փաստաթղթերը լինելու են ձեր նախկին Սոցիալական Ապահովության համարի եւ անվան, տակ (եթե դուք փոխել եք ձեր անունը): Եթե դուք որոշել եք փոխել ձեր անունը, մենք առաջարկում ենք որ դուք անեք դա նախքան նոր համար ստանալու դիմում ներկայացնելը:

Ինչպե՞ս դիմել նորՍոցիալական Ապահովության համարի

Անձամբ պէտք է այցելեք որեւէ մի Սոցիալական Ապահովության գրասենյակ: Մենք օգնում ենք ձեզ լրացնելու մի տեղեկագիր, բացատրելու թէ դուք ինչու նոր համար պէտք ունեք.

Ձեզանից պահանջվում է ներկայացնել.

- Բռնությունը կամ հարձակումը փաստագրող վկայություն.
- Ձեր ներկայում ունեցած Սոցիալական Ապահովության համարը.
- Բնագիր փոստաթղթեր, որոնք հաստատում են ձեր.
  - — Միացյալ Նահանգների քաղաքացիությունը կամ ներգաղթի կարգավիճակը.
  - — Ձեր տարիքը.
  - — Ինքնությունը.
  - — Վկայություն ձեր անվան օրինական փոփոխման մասին՝ եթէ դուք փոխել եք ձեր անունը:

Մեզ նաեւ անհրաժեշտ է տեսնել բնագիր փաստաթղթեր ապացուցելու որ դուք խնամում եք այն երեխաներին, որոնց համար խնդրում եք նոր համարներ. ինչպես նաեւ նրանց ԱՄՆ քաղաքացիությունը, տարիքը եւ ինքնությունը հաստատող փաստաթղթերը:

Քաղաքացիության կամ ներգաղթի կարգավիճակը

ԱՄՆ քաղաքացի. Որպես ԱՄՆ քաղաքացիության վկայություն, մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր: Դրանց շարքում են ԱՄՆ ծծնդյան վկայականը, ԱՄՆ հյուպատոսարանի կողմից ծնունդի արձանագրությունը, ԱՄՆ անցագիրը, Հպատակագրման կամ Քաղաքացիության վկայականը:

Ոչ քաղաքացի. Ձեր ԱՄՆ ներգաղթի կարգավիճակը ապացուցելու համար դուք պետք է ցույց տաք մեզ ԱՄՆ ներգաղթի վավերական փաստաթուղթ, I-94-ը՝ *Arrival/Departure Record* (*Ժամանման/Մեկնման Յուցագիրը*), որը ձեզ տրվել է Միացյալ Նահանգներ ժամանելու պահին: Եթէ դուք F-1 կամ M-1 դպրոցական ուսանող եք, դուք պետք է մեզ ներկայացնեք նաեւ ձեր I-20-ը՝ *Certificate of Eligibility for Nonimmigrant Student Status* (*Ուսանողի Ոչ Ներգաղթային Կարգավիճակի Իրավասության Վկայականը*): Եթէդուք J-1 կամ J-2 փոխանակման կարգով ժամանած այցելու եք, դուք պետք է ներկայացնեք ձեր DS-2019-ը՝ *Certificate of Eligibility for Exchange Visitor (J-1) Status* (*Փոխանակման Այցելուի [J-1]*) Կարգավիճակի Իրավասության Վկայականը):

Տարիքը

Դուք պետք է ներկայացնեք ձեր ծննդյան վկայականը՝ եթէ ունեք կամ կարող եք հեշտությամբ ստանալ զայն: Եթէ ոչ, մենք կարող ենք ընդունել այլ փաստաթղթեր, օրինակ՝ ձեր անցագիրը կամ Հայրենիքի Ապահովության Վարչության (DHS) կողմից տրված փաստաթղթեր, որոնք հաստատում են ձեր տարիքը:

Ինքնության հաստատումը

Որպես ինքնության հաստատում, մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր: Ընդունելի փաստաթուղթը պետք է լինի վավերական (ոչ ժամկետանց), ցույց տալով ձեր անունը, ազգանունը, ինքնությունը հաստատող տեղեկություն, եւ ցանկալի է որ այն ունենա վերջերս հանված լուսանկար:

ԱՄՆ քաղաքացի. Որպես ինքնության հաստատում,Սոցիալական Ապահովության Վարչությունը պահանջում է ձեր ԱՄՆ վարորդական իրավունքը, նահանգի կողմից տրված ինքնությունը հաստատող ոչ վարորդական քարտը կամ ԱՄՆ անձնագիրը: Եթե դուք չունեք մեր պահանջած որոշակի փաստաթղթերը, կարող եք ներկայացնել այլ փաստաթղթեր, ներառյալ.

- Գործատիրոջ կողմից տրված ինքնությունը հաստատող աշխատանքային քարտ .
- Դպրոցի կողմից տրված ինքնությունը հաստատող ուսանողական քարտ .
- Ամուսնության փաստաթուղթ.
- Առողջության ապահովագրության քարտ (ոչ Մէտիքէրի քարտը).
- ԱՄՆ զինվորական ինքնության քարտ.
- Որդեգրման հրամանագիր կամ
- Կյանքի ապահովագրության պայմանագրություն

(շրջել)

Ոչ քաղաքացիներ. Սոցիալական Ապահովությունը պահանջում է ԱՄՆ ներգաղթի ձեր վավերական փաստաթղթերը: Ներգաղթի ընդունելի փաստաթղթերն ընդգրկում են.

- Ձեւաթուղթ I-551-ը (ներառում է մեքենայով կարդացվող ներգաղթի վիզան որ գտնվում է ձեր օտարերկրյա ոչ ժամկետանց անցագրի մէջ).
- I-94-ը ձեր օտարերկրյա ոչ ժամկետանց անցագրով կամ
- Հայրենիքի Ապահովության Գրասենյակի կողմից ստացված աշխատանքի թույլտվության քարտը (I-766 կամ I-688B):

Անվան փոփոխությունը

Եթէ դուք օրինական ձեւով փոխում եք ձեր անունը՝ ամուսնության, ամուսնալուծության, դատարանի որոշման կամ որեւէ այլ պատճառով, դուք պետք է տեղյակ պահեք Սոցիալական Ապահովության Գրասենյակը որպեսզի կարողանաք ստանալ փոխարինող քարտ: Եթէ դուք աշխատում եք, պետք է նաեւ տեղյակ պահեք ձեր գործատէրը: Եթէ ձեր անունը փոխելուց մեզ տեղյակ չպահեք, հետեւյալ բարդությունների առաջ կը գտնվեք `.

- Ձեր վճարած հարկերի փոխհատուցումը կուշանա
- Ձեր աշխատավարձի հարկերը ճիշտ չեն փոխանցվի ձեր Սոցիալական Ապահովության գործի պատմության մէջ, որը կարող է նվազեցնել ձեր ապագայում ստանալիք Սոցիալական Ապահովության նպաստների գումարը:

Եթէ անհրաժեշտ է փոխել ձեր անունը ձեր Սոցիալական Ապահովության քարտում, մենք պահանջում ենք տեսնել վերջերս տրված փաստաթղթեր որպես օրինական փոփոխման վկայություն: Անուն փոխելու ընդունելի փաստաթղթերն են.

- Ամուսնության վկայական.
- Ամուսնալուծության որոշում, որտեղ հստակօրէն գրվում է որ դուք կարող եք փոխել ձեր անունը.
- Հպատակագրման վկայական, որտեղ ցույց է տրված ձեր նոր անունը կամ
- Դատարանի վճիռ անվան փոփոխման մասին:

Եթէ անվան փոփոխման մասին ձեր կողմից ներկայացված փաստաթղթերը չեն տալիս բավարար տեղեկություն ձեր ինքնությունը հաստատելու համար, ապա դուք պետք է ցույց տաք ինքնությունը հաստատող երկու փաստաթղթեր.

- Մէկ փաստաթուղթը ձեր հին անվամբ.
- Երկրորդ փաստաթուղթը ձեր նոր անվամբ:

Բացի ձեր անունից, այդ փաստաթղթերը պետք է պարունակեն ձեր ինքնությունը հաստատող տեղեկություն կամ վերջերս հանված լուսանկար:

Եթէ դուք Միացյալ Նահանգներից դուրս ծնյալ քաղաքացի եք, եւ մեր մօտ այս տեղեկությունը չէ արձանագրված, ապա ձեզ անհրաժեշտ կլինի ձեր հպատակության փաստաթուղթը ներկայացնել: Եթէ դուք քաղաքացի չեք, ձեզնից պահանջվում է ձեր ներկա ներգաղթային կարգավիճակը հաստատող փաստաթուղթ:

Հին համարը կը պահեք, սակայն կը ստանաք նոր քարտ ձեր նոր անունով:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն բնագիր կամ վավերացված այն կազմակերպության կողմից որ զանոնք պարենաւորած է: Մենք չենք կարող ընդունել կրկնօրինակներ կամ նոտարի կողմից հաստատված փաստաթղթեր: Մենք նաեւ չենք կարող ընդունել ստացագիրներ որոնք ցույց են տալիս թէ դուք սպասում եք մեր պահանջած փոստաթղթերին: Մէկ փաստաթուղթը մենք կարող ենք օգտագործել երկու նպատակով: Օրինակ, մենք կարող ենք Հայրենիքի Ապահովության Գրասենյակի կողմից ձեզ տրված աշխատանքի թույլտվության փաստաթուղթը օգտագործել որպես աշխատելու իրավունք եւ ինքնությունըհաստատելու վկայություն: ***Այնուամենայնիվ, դուք պէտք է ներկայացնեք երկու տարբեր փաստաթղթեր:***

Մենք կուղարկենք ձեր Սոցիալական Ապահովագրության համարն ու քարտը երբ ստանանք անհրաժեշտ տեղեկությունները եւ ստուգենք դրանց իսկությունը:

Ձեզ անհրաժեշտ վկայությունների ապահովումը

Բռնության դէմ լաւագոյն վկայությունը ստացվում է օտար անձերից, օրինակ ոստիկանությունից, բժշկական դարմանատուներից կամ բժիշկներից՝ որոնք բացատրում են հարձակման, բռնության կամ կյանքին սպառնացող վտանգի բնույթն ու իրականությունը:

Այլ ընդունելի վկայություններ են դատարանի զսպող որոշումները (restraining order), գրություններ ապաստարաններից, ընտանիքի անդամներից, բարեկամներից, խորհրդատուներից կամ այլ մարդկանցից, որոնք տեղեկություն ունեն ձեր ընտանեկան բռնության կամ հարձակման մասին:

Մենք կօգնենք ձեզ ձեռք բերելու պահանջվող ապացոյցերը, վկայությունները եւ փաստաթուղթերը:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Մենք կարող ենք ապահովել թարգմանչի անվճար ծառայություններ՝ հեռախոսով կամ ձեր տեղական գրասենյակում: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Ընտանեկան Բռնությունների Ազգային Հեռախօսահամար՝
1-800-799-SAFE (7233)
(TTY) **1-800-787-3224**

Social Security Administration
SSA Publication No. 05-10093-AM
New Numbers For Domestic Violence Victims (Armenian)
October 2006